

ՎԱՉՈՐԴՆԵՐ

Երկու վազորդներ մարզվում են շրջանաձև մարզադաշտում, որի երկարությունը 400մ է: Նրանք սկսում են վազել միևնույն կետից, մարզիչի առաջարկած ժամանակում և արագությամբ (արագություն ասելով հասկանում ենք այն ճանապարհը, որը մարզիկն անցնում է 1ր-ում):

Պահանջվում է որոշել, թե ինչ^օ հեռավորության վրա կգտնվեն մարզիկները միմյանցից մարզվելուց հետո (հեռավորությունը մարզիկների միջև եղած ամենակարճ ճանապարհն է):

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված է մեկ թիվ՝ առաջադրանքների թիվը, որը յուրաքանչյուր մազիկ ստացել է մարզիչից (երկու մարզիկներն էլ ստանում են միևնույն քանակի առաջադրանքներ): Հաջորդ տողերում գրված են յուրաքանչյուր մարզիկի առաջադրանքները, հետևյալ ֆորմատով՝ v_1 , t_1 , v_2 , t_2 , որտեղ v_1 -ը առաջին մարզիկի արագությունն է (մ/ր), t_1 -ը ժամանակը, որի ընթացքում մարզիկը պետք է վազի արագությամբ: v_2 -ը և t_2 -ը համապատասխանաբար երկրորդ մարզիկին առաջադրված մեծություններն են: Արագությունները դրական մեծություններ են, եթե պահանջվում է վազել ժամսլաքի ուղղությամբ, և բացասական է՝ եթե վազում են ժամսլաքի հակառակ ուղղությամբ:

Բոլոր մուտքային տվյալները ամբողջ թվեր են և մոդուլով չեն գերազանցում 30 000-ը: Առաջադրանքների քանակը ամենաքիչը 1 է:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ թիվ՝ վազորդների միջև եղած հեռավորությունը մարզվելու ավարտին:

Օրինակներ՝

N	stdin	stdout
1	2 8000 1 8000 1 8000 10 8001 10	10
2	1 50 4 -100 1	100
3	4 1000 4 1000 4 2000 1 2000 1 1223 7 1223 7	0

Պատրաստեց՝ Թամարա Հովհաննիսյանը: